Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

**CENN**

**Request for Proposals for Consulting Services**

**Potential Geopark Assessment Study**

**CENN**

**Հրավեր՝**
**խորհրդատվական ծառայությունների մատուցման առաջարկների ներկայացման համար**

**Ուսումնասիրություն՝ պոտենցիալ գեոպարկերի գնահատման նպատակով**



CENN is announcing a call for consultancy services under the ***Caucasus Geopark Network Program (CGNP)***, funded by the ***SDC***[1]

CENN-ը հայտարարում է խորհրդատվական ծառայությունների մրցույթ **Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC)** կողմից ֆինանսավորվող **Կովկասյան գեոպարկների ցանցի ծրագրի (CGNP)** շրջանակներում[2]:

[1] *In case of discrepancies between the Armenian and English texts, the English version shall be considered as the primary/official version.*
[2] *Հայերեն և անգլերեն տեքստերի անհամապատասխանության դեպքում որպես հիմնական կդիտարկվի անգլերեն տարբերակը:*

| **Background information and context** | **Նախապատմություն և կոնտեքստ** |
|---|---|

The South Caucasus Geoparks Network Programme is a visionary initiative aimed at establishing the first UNESCO-recognized transnational network of geoparks across Armenia, Azerbaijan, and Georgia. In the 18-month inception phase (December 2024 – May 2026), the project will foster partnerships and support regional cooperation among the three South Caucasus countries. Focusing on the region's most significant geological and natural sites, the initiative will position these areas as centers for education, sustainable tourism and green economy, ecological sustainability, and regional collaboration. With geoparks[3] as symbols of conservation and cultural pride, the South Caucasus will emerge as a leading model for cross-border heritage preservation.

To ensure the success of the project, a regional assessment designated to provide data for quality of technical outputs and strategic alignment, CENN seeks to engage a team of professionals.

Հարավային Կովկասի Գեոպարկների Ցանցի Ծրագիրը ապագայի հեռանկար ունեցող նախաձեռնություն է, որի նպատակն է ստեղծել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչված առաջին միջպետական գեոպարկների ցանցը՝ ընդգրկելով Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը: Ծրագրի 18-ամսյա նախնական փուլը (2024թ. դեկտեմբերից մինչև 2026թ. մայիս) ուղղված է գործընկերությունների ձևավորմանը և տարածաշրջանային համագործակցության խթանմանը երեք երկրների միջև: Կենտրոնանալով տարածաշրջանի կարևորագույն երկրաբանական և բնական տարածքների վրա՝ այս նախաձեռնությունը կներկայացնի այդ վայրերը որպես կրթության, կայուն զբոսաշրջության և կանաչ տնտեսության, էկոլոգիական կայունության և տարածաշրջանային համագործակցության կենտրոններ: Գեոպարկերը[4], դառնալով պահպանության և մշակութային հպարտության խորհրդանիշներ, Հարավային Կովկասը կձևավորի որպես սահմանամերձ ժառանգության պահպանման առաջատար մոդել:

Ծրագրի հաջողության ապահովման նպատակով, նախատեսվում է իրականացնել տարածաշրջանային գնահատում՝ տեխնիկական արդյունքների որակի և ռազմավարական համապատասխանության վերաբերյալ տվյալներ ստանալու համար: Այս նպատակով CENN-ը ցանկանում է ներգրավել մասնագետների խումբ:

| **Objective and general tasks** | **Նպատակ և ընդհանուր առաջադրանքներ** |
|---|---|

The contractor is expected to assess the geo-heritage of the proposed sites, providing a justification of their international significance in coordination with the Armenian Geopark working Group (GWG).

The proposed Geopark in Armenia should include:

- In-country geosite: **National geopark area in Vayots Dzor Provinc.**

The mentioned area contains the communities of Areni, Yeghegis, Yeghegnadzor, Jermuk, and Vayk. This area partially overlaps with the territory of

Կապալառուից ակնկալվում է գնահատել առաջարկվող տարածքների երկրաբանական ժառանգությունը՝ հիմնավորելով դրանց միջազգային նշանակությունը: Գնահատումների հիման վրա կապալառուն պետք է ներկայացնի պոտենցիալ գեոպարկ հանդիսացող տարածքների մանրամասն հայեցակարգեր՝ խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար: Այնուհետև խորհուրդը կվերանայի և կհաստատի գեոպարկերի վերջնական ընտրությունը:

Հայաստանի համար առաջարկվող ներպետական գեոպարկի  պետք է ներառի Վայոց Ձորի մարզը:

---

*[3] UNESCO Global Geoparks (UGGp) are single, unified geographical areas where sites and landscapes of international geological significance are managed with a holistic concept of protection, education and sustainable development.https://www.unesco.org/en/iggp/geoparks/about.*

*[4] ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլոբալ Գեոպարկները (UGGp) միասնական, ամբողջական աշխարհագրական տարածքներ են, որտեղ միջազգային նշանակության երկրաբանական վայրերն ու լանդշաֆտները կառավարվում են համապարփակ մոտեցմամբ՝ ներառելով պաշտպանություն, կրթություն և կայուն զարգացում: https://www.unesco.org/en/iggp/geoparks/about.*

the first proposed Armenian geopark delineated within the framework of a targeted program funded by the Government of the Republic of Armenia (see Fig. 2).

Geopark needs to reinforce the local identity through enhancement of a strong image linked to the geological heritage and the development of geo-tourism. The Geopark must work with local enterprises to promote and support the creation of new by-products linked to the geological heritage.

**General tasks include:**

- Carry out desk studies to review existing data, reports, maps, and policies.
- Organize and execute field assessments, including site visits and expeditions, to validate findings and collect additional data.
- Engage with stakeholders at local, national, and regional levels to ensure inclusivity and relevance of findings.
- Ensure all activities and deliverables are aligned with UNESCO Global Geopark guidelines, ensuring eligibility for application.
- The contractor must substantiate the feasibility of creating transboundary and in-country geoparks and propose coordinated management strategies for transboundary sites.
- The completed work and findings must be presented and discussed with the Project's working groups.

Այն երառում է Արենի, Եղեգիս, Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք համայնքերը: Այս տարածքը մասնակի ներառում է ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորված նպատակային ծրագրի շրջանակներում առաջարկված առաջին Հայկական գեոպարկի տարածքը:

- Գեոպարկը պետք է նպաստի տեղական ինքնության ամրապնդմանը՝ ձևավորելով հստակ կերպար, որը կապված է երկրաբանական ժառանգության հետ, և խթանի գեոզբոսաշրջության զարգացումը: Գեոպարկը պետք է համագործակցի տեղական ձեռնարկությունների հետ՝ նպաստելով երկրաբանական ժառանգության հիմքով նոր ենթարդյունքների ստեղծմանը:

**Ընդհանուր խնդիրներն են՝**

- Իրականացնել նախնական ուսումնասիրություններ՝ վերանայելով առկա տվյալները, զեկույցները, քարտեզներն ու քաղաքականությունները:
- Կազմակերպել և իրականացնել դաշտային գնահատումներ, ներառյալ տեղայցեր և արշավներ՝ արդյունքների վավերացման և լրացուցիչ տվյալների հավաքագրման նպատակով:
- Ներգրավել շահակիցներին տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ ապահովելով ներառականություն և արդյունքների համապատասխանություն:
- Համոզվել, որ բոլոր գործողություններն ու արդյունքները համահունչ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլոբալ Գեոպարկի ուղեցույցներին՝ ապահովելով ծրագրի համապատասխանությունը դիմում ներկայացնելու համար:
- Կապալառուն պետք է հիմնավորի անդրսահմանային և ներպետական գեոպարկների ստեղծման իրատեսականությունը և առաջարկի համաժամանակյա կառավարման ռազմավարություններ այդ տարածքների համար: Անդրսահմանային Գեոպարկի տարածք ընտրելիս կարևոր չափանիշներից մեկն այն է, որ տվյալ տարածքը կարողանա ձևավորել շարունակվող գեոպարկ հարևան երկրի (Վրաստան) սահմանակից տարածքների հետ: Սա հնարավորություն կստեղծի երկկողմ բանակցությունների և համաձայնագրերի համար՝ անդրսահմանային գեոպարկի զարգացման ուղղությամբ:
- Կատարված աշխատանքները պետք է ներկայացվեն և քննարկվեն Ծրագրի աշխատանքային խմբերի հետ:

| Description of the Assignment | Առաջադրանքի նկարագրությունը |
|---|---|

**A) Geoheritage of International Significance for Geoconservation:**

**Ա) Միջազգային նշանակություն ունեցող երկրաբանական ժառանգություն և դրանց**

The goal of the geological and geomorphological assessment is to identify and analyze key geoheritage features in proposed geopark area, focusing on their scientific, educational, aesthetic, and conservation significance. These assessments will contribute to the broader understanding of Earth's history and support geoconservation efforts, while also providing cultural, ecological, and educational value.

**Tasks**:

- **Inventory of Geological Features**;
- **Assessment of Geological Phenomena**:
    - Analyze their scientific value (e.g., contributions to geological research), educational potential (e.g., geotourism or school programs), and aesthetic appeal for visitors.
    - Identify threats to geosites[5], such as natural degradation or anthropogenic impacts, and propose protection measures.

**The assessments should respond to the geo-heritage requirements and criteria listed below:**

Candidate Sites must demonstrate:

1. **Representativeness**: A significant example that contributes to the understanding of Earth's evolution, including its climate and life, within its regional and global context.
2. **Rarity**: A rare or exceptional area with little or no equivalent elsewhere.
3. **Type or Key Locality**: Recognized as an international reference for stratigraphy, paleontology, mineralogy, geodynamics, or geomorphology.
4. **Evidence and Scientific Knowledge**: Sites with a notable history of scientific publications or potential for seminal contributions to geological sciences.
5. **Integrity**: Demonstrates sufficient protection and management to ensure the preservation of important geological features and objects.

**պահպանություն**

Երկրաբանական և երկրաձևաբանական գնահատման նպատակը առաջարկվող գեոպարկի տարածքում հիմնական երկրաբանական ժառանգության օբյեկտների նույնականացումը և վերլուծությունն է՝ կենտրոնանալով դրանց գիտական, կրթական, գեղագիտական և պահպանման կարևորության վրա: Այս գնահատականները կխթանեն Երկագնդի պատմության ավելի համապարփակ ըմբռնումը և կաջակցեն երկրագնդի պահպանության ջանքերին՝ միաժամանակ տրամադրելով մշակութային, էկոլոգիական և կրթական արժեք:

**Առաջադրանքներ՝**

- **Երկրաբանական օբյեկտների ցուցակագրում:**
- **Երկրաբանական երևույթների գնահատում՝**
    - Վերլուծել դրանց գիտական արժեքը (օրինակ՝ երկրաբանական հետազոտություններին նպաստելը), կրթական ներուժը (օրինակ՝ գեոզբոսաշրջություն, դպրոցական ծրագրեր) և գեղագիտական գրավչությունը այցելուների համար:
    - Բացահայտել երկրատեղանքներին[6] հասցվող սպառնալիքները՝ օրինակ բնական քայքայման կամ մարդու ներգործության պատճառով և առաջարկել պահպանման միջոցառումներ:

**Գնահատումները պետք է համահունչ լինեն ստորև ներկայացված երկրաբանական ժառանգության պահանջներին և չափանիշներին՝**

Հավակնորդ տարածքները պետք է ապահովեն՝

1. **Ներկայացուցչականություն** – Կարևոր օրինակ, որը նպաստում է Երկիր մոլորակի էվոլյուցիայի՝ այդ թվում կլիմայի և կենսաբազմազանության ընկալմանը՝ տարածաշրջանային և գլոբալ համատեքստում:
2. **Հազվադեպություն** – Հազվագյուտ կամ բացառիկ վայր, որի համարժեքը քիչ է կամ ընդհանրապես չկա այլ տարածքներում:
3. **Տեսակը կամ հիմնական տեղանքը.** Ճանաչված է որպես միջազգային նախադեպ շերտագրության, հնէաբանության, հանքաբանության, գեոդինամիկայի կամ գեոմորֆոլոգիայի համար:

*[5] A geosite is a geological or geomorphological site of significant scientific, educational, or aesthetic value, often representing a region's geological heritage. These sites can include volcanoes, cliffs, caves, and other unique geological formations or landscapes, showcasing Earth's history and processes.*

*[6] Երկրատեղանքը (նաև գեոսայթ) երկրաբանական կամ գեոմորֆոլոգիական նշանակալի գիտական, կրթական կամ գեղագիտական արժեք ներկայացնող վայր է, որը հաճախ ներկայացնում է տարածաշրջանի երկրաբանական ժառանգությունը: Այս վայրերը կարող են ներառել հրաբուխներ, ժայռեր, քարանձավներ և այլ եզակի երկրաբանական կազմավորումներ կամ լանդշաֆտներ, որոնք ցուցադրում են Երկրի պատմությունը և գործընթացները:*

- Analysis of existing spatial data (cadastral maps, municipal and national land use plans);
- Preparation of detailed maps based on land use types within the proposed geopark boundaries, including:

  - Agricultural areas (pastures, vineyards, croplands);
  - Forests and woodlands;
  - Water bodies and wetlands;
  - Settlements;
  - Industrial or mining zones;
  - Natural monuments or protected areas;
  - Legal forms of land ownership;
  - Land use conflicts (e.g., overgrazing, extractive activities, logging) and their compatibility with the objectives of the geopark;
  - Field verification in cooperation with local authorities and land users;
  - Propose zoning recommendations (e.g., conservation zones, buffer zones, tourism-use zones).

For more detailed criteria, please see UNESCO_Geoparks_Checklist Here: https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000383838

Justification of International Significance

The international significance of candidate sites is established through their exceptional geological features and their contribution to at least one of the following geological themes within the regional and global context:

1. History of Planet Earth and the Evolution of Life
2. Tectonic Systems
3. Erosional Systems
4. Volcanic Systems
5. Fluvial and Lacustrine Systems
6. Cave and Karst Systems
7. Coastal Systems
8. Glacial and Periglacial Systems
9. Desert and Semi-Desert Systems
10. Soils
11. Meteorite impacts
12. Soils

**These criteria must be taken into account.**

**Output**:

4. **Ավանդ ու գիտական արժեք** – Գիտական հրապարակումների նշանակալի պատմություն ունեցող կամ երկրաբանական գիտությունների մեջ կարևոր ներդրում ունենալու ներուժ ունեցող վայրեր:
5. **Ամբողջականություն** – Ցուցաբերում է բավարար պաշտպանություն և կառավարում՝ ապահովելու համար կարևոր երկրաբանական առանձնահատկությունների և օբյեկտների պահպանությունը:

- Գոյություն ունեցող տարածական տվյալների վերլուծություն (կադաստրային քարտեզներ, քաղաքային և ազգային հողօգտագործման պլաններ).
- Առաջարկվող գեոպարկի սահմաններում հողօգտագործման տեսակների հիման վրա մանրամասն քարտեզների պատրաստում, ներառյալ՝
  - Գյուղատնտեսական տարածքներ (արոտավայրեր, խաղողի այգիներ, վարելահողեր).
  - Անտառներ և անտառային տարածքներ.
  - Ջրային մարմիններ և ճահճուտներ.
  - Բնակավայրեր.
  - Արդյունաբերական կամ հանքարդյունաբերական գոտիներ.
  - Բնության հուշարձաններ կամ պահպանվող տարածքներ.
  - Հողային սեփականության իրավական ձևեր.
  - Հողօգտագործման կոնֆլիկտներ (օրինակ՝ գերարածեցում, արդյունահանող գործունեություն, անտառահատում) և դրանց համատեղելիությունը գեոպարկի նպատակների հետ.
  - Դաշտային ստուգում՝ համագործակցելով տեղական իշխանությունների և հողօգտագործողների հետ.
  - Առաջարկել գոտիավորման առաջարկություններ (օրինակ՝ պահպանման գոտիներ, բուֆերային գոտիներ, զբոսաշրջային օգտագործման գոտիներ):

Լրացուցիչ չափանիշների համար՝ տես այստեղ՝ **UNESCO Geoparks Checklist**:
https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000383838

Միջազգային կարևորության հիմնավորում

Հավակնորդ տարածքների միջազգային նշանակությունը ձևավորվում է բացառիկ երկրաբանական օբյեկտների և դրանց՝ հետևյալ թեմաներից մեկին առնչությամբ՝ տարածաշրջանային և գլոբալ համատեքստում.

- Comprehensive inventory with maps, routes, borders, photographs, and descriptions.
- Analysis of geological diversity, preservation status, and comparison with existing UNESCO Global Geoparks.

**B) Biodiversity Studies**:

Evaluation of the ecological richness and conservation needs of the geopark areas to identify and protect biodiversity hotspots.

**Tasks:**

- **Flora and Fauna Surveys**:
  - Conduct desk studies to document species of flora and fauna, including endemic, rare, or threatened species.
  - Map habitats and ecological communities within the proposed geopark areas.
- **Assessment of biodiversity inclusion and ecosystems services:**
  - Analyse the biodiversity and connectivity in order to understand the priorities
- **Threat Analysis**:
  - Identify current or potential threats to biodiversity, including habitat fragmentation, invasive species, or overuse of natural resources.

**Output**:

- Biodiversity description with species lists, habitat maps, and conservation recommendations.
- Report on ecosystem services and sustainable governance strategies.

**C) Socio-Economic Impact Studies**:

Evaluation of how geopark designation will affect local economies, communities, and livelihoods while identifying strategic visions to mitigate potential challenges.
The Contractor will provide a justification for the geological, historical, cultural and archaeological heritage, biodiversity, socio-economic significance of the proposed geopark areas. These justifications are intended as conceptual, rather than detailed feasibility studies, focusing on the key features and strategic considerations for the development of the geopark.

1. Երկիր մոլորակի պատմություն և կյանքի էվոլյուցիա
2. Տեկտոնիկ համակարգեր
3. Էրոզիոն համակարգեր
4. Հրաբխային համակարգեր
5. Գետային և լճային համակարգեր
6. Քարանձավային և կարստային համակարգեր
7. Ծովափնյա համակարգեր
8. Ծովային համակարգեր
9. Սառցադաշտային և սառցադաշտամերձ համակարգեր
10. Անապատային և կիսաանապատային համակարգեր
11. Մետեորիտների բախումներ
12. Հողեր

**Այս չափանիշները պարտադիր է հաշվի առնել:**

**Արդյունքներ**

- `Երկրաբանական առանձնահատկությունների ամբողջական ցանկ` քարտեզներով, երթուղիներով, լուսանկարներով և նկարագրություններով
- Երկրաբանական բազմազանության, պահպանման վիճակի վերլուծություն և համեմատություն` ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործող գլոբալ գեոպարկների հետ:

**Բ) Կենսաբազմազանության ուսումնասիրություն**

Գնահատել գեոպարկի տարածքների էկոլոգիական հարստությունը և պահպանման կարիքները` կենսաբազմազանության ռիսկերով հագեցած կետերը պարզելու և պաշտպանելու նպատակով:

**Առաջադրանքներ՝**

- **Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրություն**
  - Կատարել դաշտային մանրամասն ուսումնասիրություններ` փաստագրելու բուսականության և կենդանական աշխարհի տեսակները, ներառյալ էնդեմիկ, հազվագյուտ կամ վտանգված տեսակները:
  - Քարտեզագրել կենսաբազմազանության բնական միջավայրերը (կենսամիջավայրեր) և էկոլոգիական համայնքները:
- **Կենսամիջավայրերի ամբողջականության և էկոհամակարգային ծառայությունների գնահատում**
  - Վերլուծել կենսամիջավայրերի առողջությունն ու կապակցվածությունը` պարզելու պահպանության առաջնահերթությունները:
- **Սպառնալիքների վերլուծություն՝**
  - Բացահայտել կենսաբազմազանությանը սպառնացող հնարավոր կամ առկա վտանգները, այդ թվում` էկոլոգիական միջավայրերի

**Tasks**:

- **Socio-Economic Analysis**:
  - Assess the current socio-economic conditions of communities in and around proposed geopark areas.
  - Land use analysis.
  - Identify opportunities for job creation, income generation, and sustainable tourism.
- **Tourism Potential and Risks**:
  - Evaluate the potential for developing geotourism, eco-tourism and agritourism activities.
  - Examine risks such as resource overuse, visitor management challenges, or cultural homogenization.
- **Community Engagement**:
  - Engage local communities through consultations and participatory workshops to understand their perspectives and priorities.
  - Identify strategies for equitable benefit-sharing and minimizing adverse impacts.

**Output**:

- Report on socio-economic conditions, opportunities, and challenges.
- Recommendations for geotourism development and sustainable community involvement.

**D) Historical-cultural and archaeological Heritage Assessments**:

Assess the cultural and historical richness of the geopark areas, focusing on the integration of natural/geological and cultural heritage for educational and tourism purposes.

**Tasks**:

- **Documentation of Historical cultural Assets**:
  - Inventory archaeological sites, historical landmarks, and traditional practices within the proposed geopark areas.
  - Assess the condition, accessibility, and significance of cultural heritage resources.
- **Community and Cultural Relationships**:
  - Evaluate the role of cultural heritage in local identity and traditions.

մասնատումը, ներմուծված տեսակները կամ բնական պաշարների գերշահագործումը:

**Արդյունքներ՝**

- Կենսաբազմազանության ցանկ՝ տեսակների ցուցակներով, կենսամիջավայրերի քարտեզներով և պահպանման առաջարկություններով,
- Զեկույց՝ էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ և դրանց կայուն կառավարման ռազմավարություններով:

**Գ) Սոցիալ-տնտեսական ազդեցության ուսումնասիրություն**

Գնահատել, թե ինչպես գեոպարկի ճանաչումը կազդի տեղական տնտեսությունների, համայնքների և կենսապայմանների վրա՝ միաժամանակ առաջարկելով մարտահրավերների մեղմացման ռազմավարություններ: Կապալառուն կտրամադրի առաջարկվող գեոպարկի տարածքների երկրաբանական, պատմամշակութային և հնագիտական ժառանգության, կենսաբազմազանության, սոցիալ-տնտեսական նշանակության հիմնավորում: Այս հիմնավորումները նախատեսված են որպես հայեցակարգային, այլ ոչ թե մանրամասն իրագործելիության ուսումնասիրություններ, որոնք կենտրոնանում են գեոպարկի զարգացման հիմնական հատկանիշների և ռազմավարական նկատառումների վրա:

**Առաջադրանքներ՝**

- **Սոցիալ-տնտեսական վերլուծություն՝**
  - Վերլուծել առաջարկվող գեոպարկի տարածքների ներսում և շուրջ գտնվող համայնքների ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակը,
  - Հողատարածքների օգտագործման վերլուծություն:
  - Նշել աշխատատեղերի ստեղծման, եկամտի աղբյուրների և կայուն զբոսաշրջության հնարավորությունները:
- **Զբոսաշրջության ներուժ և ռիսկեր՝**
  - Գնահատել գեոզբոսաշրջության, էկոզբոսա-շրջության և ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները:
  - Ուսումնասիրել հնարավոր ռիսկեր՝ բնական ռեսուրսների գերշահագործում, այցելուների հոսքի կառավարում կամ մշակութային նույնակերպում:
- **Համայնքների ներգրավում՝**

   - Develop strategies to enhance community involvement in cultural preservation.
- **Education and Interpretation**:
   - Propose scientific-educational and interpretive programs to connect visitors with the cultural and natural heritage of the geopark.

**Output:**

- Cultural heritage inventory with detailed description and preservation strategies.
- Recommendations for integrating cultural heritage into geotourism and community education initiatives.

**E) Legal analyses of Armenia's national policies' and legislation's compliance with UNESCO Global Geoparks guidelines and criteria**

The assessment should include desk studies and at least 1 site visits per potential area.
The assessment shall be carried out in consultation with an international Geopark specialist and in coordination with the National Geo-Council of Armenia and the CENN team, which will, in turn, facilitate the required bilateral coordination.

   - Ներգրավել տարածքում գտնվող համայնքներին խորհրդակցությունների և մասնակցային աշխատաժողովների միջոցով՝ հասկանալու նրանց առաջնահերթությունները ու կարծիքները:
   - Մշակել ռազմավարություններ՝ արդար բաշխման և բացասական ազդեցությունների նվազեցման համար:

**Արդյունքներ՝**

- Զեկույց՝ սոցիալ-տնտեսական վիճակի և պայմանների, հնարավորությունների և մարտահրավերների վերաբերյալ,
- Առաջարկություններ՝ գեոզբոսաշրջության զարգացման և համայնքների կայուն ներգրավման ուղղությամբ:

**Դ) Պատմամշակութային և հնագիտական ժառանգության գնահատում**

Գնահատել գեոպարկի տարածքների մշակութային և պատմական հարստությունը, կենտրոնանալով բնական/երկրաբանական և մշակութային ժառանգության և ինտեգրման վրա՝ կրթական և զբոսաշրջային նպատակներով:

**Առաջադրանքներ՝**

- **Պատմամշակութային արժեքների ցուցակագրում՝**
   - Պատրաստել հնագիտական վայրերի, պատմական հուշարձանների և ավանդական մշակույթների ցանկ՝ առաջարկվող գեոպարկի տարածքներում:
   - Վերլուծել մշակութային ժառանգության ռեսուրսների վիճակը, մատչելիությունը և նշանակությունը:

- **Համայնքային և մշակութային կապեր՝**
   - Գնահատել մշակութային ժառանգության դերը տեղական ինքնության և ավանդույթների ձևավորման մեջ:
   - Մշակել ռազմավարություններ՝ մշակույթի պահպանման հարցում համայնքների ներգրավվածության ուժեղացման համար :
- **Կրթություն և ներկայացում՝**
   - Առաջարկել գիտակրթական և գրավիչ ծրագրեր, որոնք կկապեն այցելուներին գեոպարկի բնական և մշակութային ժառանգության հետ:

**Արդյունքներ**

- Մշակութային ժառանգության ցանկ՝ մանրամասն նկարագրություններով և պահպանման ռազմավարություններով,
- Առաջարկություններ՝ մշակութային ժառանգության ինտեգրման վերաբերյալ գեոզբոսաշրջության և համայնքային կրթական նախաձեռնությունների մեջ

**Ե) Վերլուծություն՝ Հայաստանի ազգային քաղաքականությունների և օրենսդրության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլոբալ Գեոպարկների չափանիշների միջև համապատասխանության վերաբերյալ**

Գնահատումը պետք է ներառի առնվազն մեկ տեղայց յուրաքանչյուր հավանական տարածքում:
Գնահատումը պետք է իրականացվի միջազգային գեոպարկի մասնագետի հետ խորհրդակցելով և Հայաստանի ազգային գեոխորհրդի և CENN թիմի հետ համակարգված, ինչը, իր հերթին, կնպաստի անհրաժեշտ երկկողմ համակարգմանը:

| Deliverables | Արդյունքներ |
|---|---|
| • **Inception Analysis**<br>○ Detailed methodology, work plan, and preliminary analysis of potential geopark area assessment. | **Մեկնարկային վերլուծություն**<br>○ Մանրամասն մշակված մեթոդաբանություն, աշխատանքային պլան և գեոպարկի հնարավոր տարածքների նախնական վերլուծություն: |
| • **Geological and Geomorphological Assessment Analysis**<br>○ Inventory of geological and geomorphological features with descriptions, photographs, and maps.<br>○ Description of territorial geological resources, including the following indicators:<br>▪ Number of geosites;<br>▪ Geodiversity;<br>▪ Comparison to the geology of existing Geoparks in different countries.<br>▪ Current or potential threats to the geosites concerning their preservation and proper maintenance.<br>▪ Geopark Borders. | • **Երկրաբանական և երկրաձևաբանական գնահատման զեկույց**<br>○ Երկրաբանական և գեոմորֆոլոգիական օբյեկտների ցանկ՝ նկարագրություններով, լուսանկարներով և քարտեզներով:<br>○ Տարածքի երկրաբանական ռեսուրսների նկարագրություն՝ ներառյալ հետևյալ ցուցանիշները՝<br>▪ Երկրատեղանքների քանակը,<br>▪ Երկրաբանական բազմազանությունը,<br>▪ Գեոպարկի հետաքրքրություն ներկայացնող հանրային մեկնաբանումը,<br>▪ Համեմատություն տարբեր երկրներում առկա Գեոպարկների երկրաբանության հետ,<br>▪ Երկրատեղանքներին սպառնացող առկա կամ հնարավոր վտանգները՝ պահպանման և պատշաճ կառավարման տեսանկյունից,<br>▪ Գեոպարկի սահմաններ: |

- **Biodiversity Assessment Analysis**
  - Description of flora, fauna, and habitats, highlighting conservation priorities.

- **Socio-Economic Impact Analysis**
  - Analysis of local economic conditions, land use, tourism potential, and the socio-economic impact of granting geopark status.

- **Cultural Heritage Assessment Analysis**
  - Comprehensive documentation of cultural and historical assets, including community connections.

- **Boundary Designation Analysis and Maps**
  - Clear boundary maps with scientific, ecological, and cultural justifications meeting UNESCO requirements.

- **Final Report**
  - Consolidated findings, arguments for nomination as a UNESCO Geopark, and actionable recommendations.
  - Geological description
  - Strategy and legislation to protect geosites and features.
  - Geosite protection against misuse and damage.
  - Measures to protect geosites and infrastructure against damage and natural degradation.
  - Recognition of the territorial natural and cultural heritage, which is based on the following indicators: a natural value (aesthetic, biodiversity), b. cultural heritage, c. relation between natural resources and cultural heritage.
  - Economic assessment and potential for Geotourism. What economic drivers are in place and what potential exists.
  - Potential for public education and research.
  - Potential of local community engagement in the Geopark economic and conservation activities.
  - Boundaries: Explain the boundaries of the geoparks and what they correspond to (administrative boundaries, national park, etc.).Management strategies for geological heritage and geodiversity; comprehensive nature conservation

- **Կենսաբազմազանության գնահատման զեկույց**
  - Ֆլորայի, ֆաունայի և դրանց բնական միջավայրերի էկոլոգիական ուսումնասիրություններ՝ վերջիններիս պահպանության առաջնահերթության ընդգծմամբ:

- **Սոցիալ-տնտեսական ազդեցության զեկույց**
  - Տեղական տնտեսական վիճակի, զբոսաշրջության ներուժի և գեոպարկի գործունեության սոցիալ-տնտեսական ազդեցությունների վերլուծություն:

- **Մշակութային ժառանգության գնահատման զեկույց**
  - Մշակութային և պատմական արժեքների համապարփակ փաստաթղթավորում՝ համայնքային կապերի ընդգծմամբ:

- **Տարածքների սահմանազատման զեկույց և քարտեզներ**
  - Հստակ սահմանազատված քարտեզներ՝ գիտական, էկոլոգիական և մշակութային հիմնավորումներով՝ համապատասխան ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին:

- **Եզրափակիչ զեկույց**
  - Համախմբված արդյունքներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գեոպարկի համար առաջադրելու հիմնավո-րումներ և գործնական առաջարկություններ՝ 1 միջսահմանային (Վրաստանի հետ) և 1 ազգային Գեոպարկի համար,
  - Երկրաբանական նկարագրություն,
  - Երկրատեղանքների և օբյեկտների պաշտպա-նության ռազմավարություն և օրենսդրություն,
  - Երկրատեղանքների ոչ պատշաճ օգտագործումից և վնասումից պաշտպանության միջոցառումներ,
  - Երկրատեղանքների և ենթակառուցվածքների պաշտպանության միջոցառումներ՝ վնասումից և բնական քայքայման վտանգներից:
  - Տարածքի բնական և մշակութային ժառանգութ-յան ճանաչում, որը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝ ա. բնական արժեք (գեղագիտական, կենսաբազմազանություն), բ. մշակութային ժառանգություն, գ. բնական ռեսուրսների և մշակութային ժառանգության փոխկապակցվածություն:
  - Տնտեսական գնահատում և գեոզբոսաշրջության ներուժ՝ գործող տնտեսական շարժիչներ և զարգացման հնարավորություններ:
  - Հանրային կրթության և գիտահետազոտական գործունեության հնարավորություններ:
  - Գեոպարկի տնտեսական և պահպանության գործառույթներում համայնքների ներգրավման ներուժը,

policies; territorial planning including geoconservation,

- Սահմաններ՝ ներկայացնել գեոպարկերի սահմանները և դրանց համապատասխանությունը վարչական սահմաններին, ազգային պարկերին և այլն:

Geological heritage and diversity management strategies, comprehensive nature conservation policies, spatial planning, including geological conservation.

Երկրաբանական ժառանգության և բազմազանության կառավարման ռազմավարություններ, բնության պահպանության համապարփակ քաղաքականություն, տարածքային պլանավորում, ներառյալ երկրաբանական պահպանությունը:

| Location | Վայրը |
|---|---|
| **Vajots dzor provinces of the Republic of Armenia** | **Վայոց ձորի մարզ, Հայաստանի հանրապետություն** |
| **Approximate Start and End of the Assignment** | **Առաջադրանքի մոտավոր սկիզբը և ավարտը** |
| September – November, 2025 (3 months) | 2025 թվականի սեպտեմբերից նոյեմբեր, 3 ամիս |
| **Required Documents (Legal Person)** | **Պահանջվող փաստաթղթեր (Իրավաբանական անձ)** |

1. **Financial Proposal**
   - Detailed Cost Breakdown according to the description of the assignment.
   - Total cost of the service, including VAT. The budget must include transportation, accommodation and unforeseen costs (Annex_2_Budget_Geoparks).

2. **Qualification and Experience**
   - CV of the expert(s) assigned to the project, highlighting their relevant qualifications, skills, and past experience related to the scope of work.
   - Portfolio of Past Projects: Documented examples of previous work, especially projects similar in scope and complexity.

3. **Certificates and Accreditations:**
   - Any relevant certifications, licenses, or professional accreditations that demonstrate the qualifications of the bidder and their compliance with industry standards.

4. **Project Schedule** outlining all stages of the assignment (Annex 1- Annex_1_Geopark Assessment).

**1. Ֆինանսական առաջարկ**
- Առաջադրանքի նկարագրությանը համապատաս-խան ծախսերի մանրամասն բաժանում:
- Ծառայության ընդհանուր արժեք՝ ներառյալ ԱԱՀ: Բյուջեն պետք է ներառի տրանսպորտի, կեցության և չնախատեսված ծախսերը (Հավելված_2_Բյուջե_Գեոպարկեր).

**2. Որակավորում և փորձառությու**
- Նախագծում ընդգրկված փորձագետի(ների) ինքնակենսագրականը(ները)՝ ընդգծելով համապատասխան որակավորումները, հմտությունները և կատարած աշխատանքային փորձը՝ կապված առաջադրանքի շրջանակի հետ:
- Նախկինում իրականացված ծրագրերի պորտֆել՝ փաստաթղթավորված օրինակներ նախկին փորձից, հատկապես՝ նմանատիպ բարդությամբ և ծավալով նախագծեր:

**3. Վկայագրեր և հավատարմագրումներ**
Ցանկացած համապատասխան սերտիֆիկատ, լիցենզիա կամ մասնագիտական հավատարմագիր, որոնք հաստատում են հայտատուի որակավորումը և համապատասխանությունը ոլորտային ստանդարտ-ներին:

**4. Նախագծի ժամանակացույց**՝ ներառյալ առաջադրանքի բոլոր փուլերը (Հավելված 1-Հավելված 1-Գեոպարկի գնահատում)

| **Required Documents (Individual person or a consortium of experts)** | **Պահանջվող փաստաթղթեր (Անհատ անձ կամ փորձագետների կոնսորցիում)** |
|---|---|

1. **Financial Proposal**
   - Detailed Cost Breakdown according to the description of the assignment.
   - Total cost of the service, including taxses. The budget must include transportation, accommodation and unforeseen costs (Annex_2_Budget_Geoparks).

2. **Qualification and Experience**
   - CV of the expert(s) assigned to the project, highlighting their relevant qualifications, skills, and past experience related to the scope of work.
   - Portfolio of Past Projects: Documented examples of previous work, especially projects similar in scope and complexity.

1. **Ֆինանսական առաջարկ**
   - Առաջադրանքի նկարագրությանը համապատաս-խան ծախսերի մանրամասն բաժանում:
   - Ծառայության ընդհանուր արժեք՝ ներառյալ Հարկերը: Բյուջեն պետք է ներառի տրանսպորտի, կեցության և չնախատեսված ծախսերը: (Հավելված 2-Բյուջե-Գեոպարկեր)

2. **Որակավորում և փորձառություն**
   - Նախագծում ընդգրկված փորձագետի(ների) ինքնակենսագրականը(ները)՝ ընդգծելով համապատասխան որակավորումները, հմտությունները և կատարած աշխատանքային փորձը՝ կապված առաջադրանքի շրջանակի հետ:
   - Նախկինում իրականացված ծրագրերի պորտֆել՝ փաստաթղթավորված օրինակներ նախկին փորձից, հատկապես՝ նմանատիպ բարդությամբ և ծավալով

| | |
|---|---|
| 3. **Certificates and Accreditations:**<br>• Any relevant certifications, licenses, or professional accreditations that demonstrate the qualifications of the bidder and their compliance with industry standards. | նախագծեր:<br>3. **Վկայագրեր և հավատարմագրումներ** Ցանկացած համապատասխան սերտիֆիկատ, լիցենզիա կամ մասնագիտական հավատարմագիր, որոնք հաստատում են հայտատուի որակավորումը և համապատասխանությունը ոլորտային ստանդարտ-ներին: |
| 4. **Project Schedule and description,** outlining all stages of the assignment (Annex 1-Annex_1_Geopark Assessment) | 4. **Նախագծի ժամանակացույց**՝ ներառյալ առաջադրանքի բոլոր փուլերը: (Հավելված 1-Հավելված 1-Գեոպարկի գնահատում) |
| **Deadline for the Submission of Proposals** | **Առաջարկների ներկայացման վերջնաժամկետը** |
| Proposals should be submitted via e-mail no later than September 8, 2025 to:<br>tenders@cenn.org,<br>office@greenlane.am<br>ana.tsanava@cenn.org | Առաջարկները պետք է ներկայացվեն էլեկտրոնային փոստով՝ ոչ ուշ, քան ս.թ. սեպտեմբերի 8-ը:<br>tenders@cenn.org,<br>office@greenlane.am<br>ana.tsanava@cenn.org |
| **Evaluation Criteria** | **Գնահատման չափանիշներ** |
| • Financial Proposal - Maximum points: 30<br>• Qualification and Experience – Maximum Points: 50<br>• Timeline expectations - Maximum Points: 20 | • Ֆինանսական առաջարկ - Առավելագույն միավոր՝ 30<br>• Որակավորում և փորձ - Առավելագույն միավորը՝ 50<br>• Ժամանակացույց - Առավելագույն միավորը՝ 20 |